

ու ընթրիքին մէջ տեղն ալ նոյնպէս քիչ մը բան : Երէկ սեղանատունը պատած ժամանակս վերջին նախընթաց պատրաստութիւնը տեսայ, փոքր կտոր մը հաց 25 տրէմ քանակութեամբ, 3 սալոր և 2 ծիրան : Գարուցի գիմացի լեռներուն տեսքը շատ հաճախարար է : Զը մոռնամ ըսել, որ այս կողմերը վանքերու և եկեղեցեաց մեծ բազմութիւն կայ, վասն զի որ, չափ լեռներու և բլուրներու գագաթներ տեսնուին, որք անթիւ են, նոյն չափ դանդաղատներ : Կերեւի թէ Պապութեան ամենէն հարազատ որդիներն հոս են : Ուրիշ անգամ կը յուսամ աւելի շատ գրեւ ուրիշ տեղերու առթիւ :

ԿԵԼԻՊՈԼՈՒԷՆ

Կէլիպոլուէն կը գրեն, որ Մայիս 30 ին իրենց Աւագ-երէց Տ. Յովհաննէս մաքրակրօն քահանայն առ Աստուած փոխուած է բոլոր ժողովուրդը ոգոյ և թախծութեան մէջ թողլով, որովհետեւ յիշեալ քահանայն քառասուն տարի է 'ի վեր է, որ ժողովրդեան հոգեւոր հայրութիւն կ'ընէ եղեր, և այս երկար ժամանակին մէջ իւր բարի վարուք և հեղահամբոյր բնաւորութիւնը յաջողած է ամենուն սիրտը շահել և գրաւել : Զոր մը մահը անհնարին թախծութեամբ կը համակէ որդիները, բայց հոգեւոր հօր մը մահը, բոլոր հասարակութիւնը : Մեռնիլը ամէն մահկանացուի համար բնական է, բայց երանի որոց 'ի Տէր ննջեն, և երանի՛ աւնոյց, որոնք առաքինւոյ մը յիշատակը սուրբ և անջնջ կը պահեն իրենց մէջ :

Ժ. Ա. Մ. Ա. Ն. Ա. Կ. Ա. Դ. Ռ. Կ. Ա. Ն. Բ.

Մայիս 30. - Յուպէի տաճիկ երիտասարդ մը կէս աւուր ժամանակ տաճիկ Փերեզակի մը խանութ կը մտնէ մի քանի անառակներու ընկերակցութեամբ և յանկարծ վրան յարձակելով ձեռքովն աչքերը կը փոցէ և դանակը կտրորդը մխելով իսկոյն կ'անշնչացնէ խանութպանն : Փերեզակին դրայիններն մեծ մասամբ Քրիստոնէայ լինելով և կիւրակէի առթիւ խանութինն գոյած ըլլալով ոճրագործն կը յաջողի շուտով խոյս տալ առանց մէկէ մը տեսնուելու : Տեղական կառավարութեան կողմէն անմիջապէս բժիշկ կը ղրկուի և քննութեամբ կրտսուգուի դանակի հարուածով մեռած լինելն : Մինչեւ ցարդ խուզարկութիւնները կը շարունակուին, ոճրագործը ճշդիւ երեւան ելած չէ, բայց չորս կասկածաւոր անձինք բանտարկուած են, որոց մին կը կարծուի ոճրագործն :

- 31. - Արդէն Հանդիսիս նախորդ թուովն հրատարակուած էր, քաղաքիս մէջ Մայիս 21 ին ուրբաթ օրը տեղի ունեցած յանկարծական երկիւղալից դէպքն : Տեղւոյս Վսեմ, կառավարիչը ուղղելով սոյն տարածայնութեան աղբիւրն գտնել, յատուկ Քննիչ Մասնաժողով մի կազմեց իւր նախագահութեամբ, որոյ անդամակցեցան իւրաքանչիւր աղբէ մասնաւոր անձինք ի տարէի ժողովէն ընտրուած : Պատուաւոր անձինք արտօնութիւն ունէին ուն կրնդիր լինելու : Խուզարկութիւնք թէ և խստիւ սկսուած էին, և խնդիրը Լաւինայ Վանուց վրայ ծանրանալ կ'երեւէր, բայց չգիտցուիր թէ ինչ պատճառաւ որոշ վախճան մը չունեցաւ :

- Յունիս 12 ին գիշեր ժամանակ քաղաքիս Յուպէի ըսուած դրան բով եղող Արաբացի բողբոսկանաց գրատուներ